# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

<<14>> օգոստոս 2017 թվականի N 26-Ա

## ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել համայնքի ավագանու վեցերորդ արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիտավան համայնքում աղբահանության աշխատանքները կազմակերպելու, աղբահանության վճար սահմանելու և բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

Կողմ (3) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Յարայյան Վաղինակ

Բայրամյան Միքայել

Մանուչարյան Սարիբեկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ (Կ.Տ.) Ռաֆոր Սարիբեկյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
## ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<14>> օգոստոս 2017 թվականի N 27-Ն

### ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիտավան համայնքի աղբահանության համար անհրաժեշտություն է առաջացել 2017 թվականի բյուջեում կատարել փոփոխություն և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 20-րդ և 5-րդ կետերով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Դիտավան համայնքում բացակայում է աղբահանության համար համապատասխան տեխնիկա, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. 2017 թվականի վարչական բյուջեի << Ընդհանուր բնույթի ծառայություններ >> 4239 հոդվածում նախատեսված 120 000 (մեկ հարյուր քսան հազար) դրամը տեղափոխել << Կոմունալ ծառայություններ>> 4213 հոդված՝ աղբահանություն կազմակերպելու նպատակով:

2. Չսահմանել աղբահանության վճարի դրույքաչափ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին հնարավորինս արագ միջոցներ ձեռնարկել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հետ,

պայմանագրային հիմունքներով բյուջեով նախատեսված գումարով կազմակերպել աղբահանություն:

**Կողմ (3)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Յարալյան Վաղինակ

Բայրամյան Միքայել

Մանուչարյան Սարիբեկ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** (Կ.Տ.) **Հակոբ Սարիբեկյան**